## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՇԱԿ ԲԱԼՅԱՆ

# ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ԻՍՄԱՅԻԼ ՀԱԳԳԸ ԵՎ ԻԶԶԵԹ ԲԵՅ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1911-1913 թթ.)

*DOI:*

**ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում ներկայացված է Վանի նահանգի հայության գոյավիճակը Իսմայիլ Հագգը և Իզզեթ բեյ կուսակալների պաշտոնավարման ժամանակաշրջանում՝ 1911-1913թթ.: Նրանց նախորդ կուսակալ Բեքիր Սամի բեյի պաշտոնանկությունից հետո՝ 1910 թ. աշնանից մինչև 1911 թ. սկզբները, Վանի կուսակալի տեղապահի պաշտոնը ժամանակավորապես վստահվում է նահանգի նախկին «դևթերտարին» (տոմարակալ - Ա. Հ.), որին 1911թ. սկզբին փոխարինում է Իսմայիլ Հագգը փաշան: Սակայն շուտով Վանի նահանգի նոր կուսակալ է նշանակվում քրդական ծագում ունեցող Իզզեթ բեյը: Ուսումնասիրության մեջ սկզբնաղբյուրային համապատասխան փաստերի օգնությամբ առաջին անգամ լուսաբանվել է Իսմայիլ Հագգը և Իզզեթ կուսակալների կառավարման շրջանում Վանի նահանգի հայության գոյավիճակը, վեր են հանվել ուսումնասիրվող ժամանակաշրջանի Վանի նահանգի հայ-քրդական հարաբերությունները, ներկայացվել է 1912թ. փետրվարի 13-ին ՀՅԴ-ի և իթթիհատի միջև ստորագրված դաշնագիրը, որով իշխող կուսակցությունը պարտավորվում էր կատարել իր վաղեմի խոստումները հայերի հողային, դպրոցական, անվտանգության և այլ խնդիրների լուծման վերաբերյալ: Հոդվածում բացահայտվել են նաև 1912 թ. ապրիլի 6-8-ը Վանում անցկացված Օսմանյան խորհրդարանի երկրորդ կարգի և 1912 թ. Վանում անցկացված քաղաքապետի ընտրությունները:

***Բանալի բառեր և արտահայտություններ.*** *Իսմայիլ Հազգը, Իզզեթ, հայ-քրդական հարաբերություններ, Վանի մարդահամար, Պետրոս Գափամաճյան, ՀՅԴ-իթթիհատ դաշինք, հողային վեճեր, իթթիհատ, իթթիլաֆ:*

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

1908թ. օգոստոսից մինչև 1910թ. աշուն կուսակալներ Մահմուդ-Խայրի, Ֆերիտ, Յավեր, Բեքիր Սամի փաշաների կառավարման Վանի նահանգում վիճակը կարծես թե տանելի էր: Նրանց օրոք՝ 1908թ. երիտթուրքական հեղաշրջման անմիջական ազդեցության ներքո, որոշակի միջոցառումներ իրականացվեցին նահանգում անօրինականությունների և անարդարությունների հաղթահարման ուղղությամբ: Վանի նահանգի թուրք զինվորականության նախաձեռնությամբ փաստեր հավաքվեցին և խիստ քննության ու դատապարտման ենթարկվեցին նահանգի կաշառակեր բոլոր պաշտոնյաները: Նահանգապետ Բեքի Սամիի օրոք 1909թ. հուլիսի 27-ին հրապարակվեց և 1910թ. օգոստոս-սեպտեմբերին գործողության մեջ դրվեց զինապարտության մասին նոր օրենքը, ըստ որի Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին անգամ 20-40 տարեկան քրիստոնյա քաղաքացիները ենթարկվում էին զորակոչի, իրավունք էին ստանում զենք կրել և ծառայել օսմանյան բանակում: Հակասությունները հին և նոր վարչաձևերի միջև ի հայտ եկան 1909թ. մարտի 31-ի պետական հեղաշրջման և Ադանայի 1909թ. ապրիլյան կոտորածների ժամանակաշրջանում, քանի որ հայությունը սահմանադրական կարգերի հիմնական արտահայտիչն էր և պաշտպանը: Ադանայի կոտորածների օրինակով 1909թ. ապրիլի 7-ից մայիսի 4-ը խժդժություններ կազմակերպվեցին նաև Վանում և հալածանքներ սկսվեցին հայ կուսակցական գործիչների նկատմամբ: Հայությունը սթափվեց հեղափոխական պատրանքներից և զգաց իթթիհատի իրական դեմքը, քանի որ Վանում նորից սկսեցին իշխել բռնությունը, կամայականությունը և բանտային հալածանքը:

**ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հոդվածը շարադրված է պատմահամեմատական, պատմանկարագրական և վերլուծական մեթոդաբանությամբ:

**ՔՆՆԱՐԿՈՒՄ**

***«Դևթերտարի» ժամանակավոր կառավարումը***

Վանի ներքաղաքական կյանքի հերթական իրադարձությունը կուսակալ Բեքիր Սամի բեյի հրաժարականն էր: Չկարողանալով գոհացում տալ քրդերի կողմից հայերի բռնազավթված հողերի վերադարձման խնդրին՝ նա 1910թ. աշնանը մեկնում է Կ.Պոլիս և հրաժարվում իր զբաղեցրած պաշտոնից՝ փոխարենը նշանակվելով Տրապիզոնի կուսակալ[1]: Ներկայացնելով Բեքիր Սամիի օրոք երիտթուրքական խորամանկ քաղաքականության ընդհանուր նկարագիրը Վանում՝ Հ. Երամյանը նշում է. «Հուրրիեթի շրջանին քանի մը թուրք կամ խառն յանձնաժողովներ, բարենորոգումներու ուսումնասիրութեան պիտակին տակ, ասուպի պէս կ'երեւնային կ'անցնէին հայկական հորիզոններէն, կարծես մէկ կողմանէ հայութիւնը սին յոյսերով օրորելու և միւս կողմէ Եվրոպայի աչքին փոշի փչելու դիտումով» **(Երամեան Հ., 1929)**:

Բեքիր Սամի բեյի հեռանալուց հետո՝ 1910 թ. աշնանից մինչև 1911 թ. սկզբները, Վանում տիրում էր անկազմակերպ և անկերպարան իրավիճակ, քանի որ Վանի կուսակալության պաշտոնի ստանձնումից հրաժարվել էր Իսմայիլ Ֆազիզ փաշան: Նրա փոխարեն Վանի կուսակալի տեղապահի պաշտոնը ժամանակավորապես վստահվում է նահանգի նախկին «դևթերտարին» (տոմարակալին - Ա. Հ.)՝ մի «աննշան, ծույլ», անփորձ և անազդեցիկ երիտասարդի, որը ամենևին էլ չէր վայելում հեղինակություն, և որն իր ժամանակն

[1] Տրապիզոնում պաշտոնավարելուց հետո նա վարել է Բուրսայի, Հալեպի և Բեյրութի վալիի (նահանգապետ) պաշտոնները: Նա երիտթուրքական կուսակցության նախկին ազդեցիկ անդամների հետ մտել է 1918թ. հոկտեմբերին ստեղծված թուրքական ազգայնական գաղտնի «Կարակոլյան» ընկերության մեջ երիտթուրքերի ընդհատակյա գործունեությունը շարունակելու, այդ թվում՝ հայոց ցեղասպանության բացահայտմանը հակազդելու համար: 1920թ. մայիսի 3-ին նա նշանակվել է Քեմալական Թուրքիայի արտաքին գործերի առաջին նախարար, իսկ 1921 թ. փետրվար - մարտին ղեկավարել թուրքական պատվիրակությունը Մոսկվայի և Լոնդոնի բանակցություններում: 1926թ. Մուստաֆա Քեմալի դեմ դավադրության կազմակերպման հանցակազմով Բեքիր Սամին ձերբակալվել է Իզմիրում, սակայն արդարացվել է: 1927թ. նա հեռացել է քաղաքականությունից և ապրել գյուղում: Մահացել և թաղվել է Ստամբուլում: Այդ մասին ավելի հանգամանորեն տե՛ս (**Челахсаты К. 2009,** նաև **Шлыков П. 2015**, նաև **«Մշակ» 1913. թիւ 14**, **«Մշակ», 1909. թիւ 251**, նաև https://buildwiki.ru/wiki/Bekir_Sami_Kunduh,https://ru.wikipedia.org/wiki/%D0%9A%D1%83%D0%BD%D0%B4%D1%83%D1%85,_%D0%91%D0%B5%D0%BA%D0%B8%D1%80_%D0%A1%D0%B0%D0%BC%D0%B8),նաևhttps://www.turkcebilgi.com/bekir_sami_kunduh.]:

անիմաստ անց էր կացնում նահանգի ղադիի (հոգևոր դատավոր – Ա. Հ.), զինվորականների և իթթիհատականների **հետ (АВПРИ РФ, 1911-1914.)**: Վանի պետական պաշտոնատան մեջ՝ աշխատավարձի բարձրացման հետ կապված նրան ապտակել էր հասարակ մի ոստիկան, իսկ նա անկարող էր գտնվել նրան պատժել, որովհետև ապտակողին հովանավորում էր նահանգային ոստիկանության պետը, իսկ «դևթերտարը» համոզված չէր դատական համակարգի անաչառության վրա **(АВПРИ РФ, 1911-1914; «Մշակ», 1911, թիւ 73)**: Այսպիսի պաշտոնատարը, որ չէր կարողանում պաշտպանել իրեն, ինչպես կարող էր երաշխավորել ամբողջ նահանգի հայության անվտանգությունը:

Չնայած այդ ամենին՝ նա բարիդրացիական հարաբերությունների մեջ էր Վանի դաշնակցականների հետ, որոնք նրան խոստացել էին իրենց միջնորդությունը ներքին գործերի նախարարությունում՝ նրան Վանի նահանգապետ հաստատելու ժամանակ **(АВПРИ РФ, 1911-1914)**:

«Դևթերտարի» օրոք հայ-քրդական հողային վեճերը կարգավորելու և բարենորոգումների համար տեղեկություններ հավաքելու նպատակով Վան է ժամանում առաջին քննիչ հանձնաժողովը, որի անդամներն էին իթթիհատի սալոնիկցի նշանավոր գործիչներ, ելևմտագետ՝ Ճավիդը, Բիթլիսի կուսակալ Իսմայիլ Հազգը և հեղափոխության առաջին առաքյալներից մեկը՝ Էոմեր Նաջին: Իրականում նրանց բուն նպատակը հայերի գաղտնի կազմակերպությունների գործունեության ուսումնասիրումն էր **(Երամեան Հ., 1929)**: Իր տեղեկագրում Էոմեր Նաջին հայտարարում էր, որ «Փոքր Ասիոյ մէջ խռովութեան որոմ սերմանողներն են Պոլսէն ղրկուած պաշտօնեաները, որոնք իսլամ և ոչ իսլամ ժողովուրդները իրարու դէմ կը գրգռեն, մինչ այդ ցեղերը կրնային իրարու հետ հաշտ և համերաշխ ապրիլ» **(Երամեան Հ., 1929)**:

***Իսմայիլ Հազգը պաշտոնավարումը***

1911թ. սկզբին ժամանակավոր կուսակալ-«դևթերտարին» փոխարինում է ալբանացի Իսմայիլ Հազգը փաշան, որը մինչ այդ Բիթլիս նահանգի

նահանգապետն էր[2]: Մեվլան Զադե Ռիֆաթը նրան անվանում է «թոփալ» Իսմայիլ Հազգը (**Ռիֆաթ Մ., 1990**): «Դևթերտարին» տեղափոխում են Բիթլիս, քանի որ քրդերի հետ նա բանսարկություններ էր լարում նոր կուսակալի դեմ (**АВПРИ РФ, 1911-1914**):

Նրա պաշտոնավարման հենց սկիզբը նշանավորվեց մի կարևոր իրադարձությամբ, որի հանգուցալուծումը մեծապես նպաստեց կուսակալի հեղինակության բարձրացմանը հայերի շրջանում: Թուրքական զինվորական վարժարանի մեծահասակ չորս աշակերտներ իրենց հետ «Բաղնիքի քարեր» կոչվող սրճարան են տանում «իտատի» (միջնակարգ վարժարանի - Ա. Հ.) երկու հայ սաների և փորձում են նրանց բռնաբարել: Սակայն հայ տղաները, որոնք զինված էին, սպանում են մեկին, մահացու վիրավորում երկրորդին, իսկ մյուս երկուսն էլ դիմում են փախուստի:

Ինչպես ասում են թուրք խուժանը նորից «կը փրփրի» և ստեղծվում է ջարդի ու արհավիրքի նոր սպառնալիք: Չնայած սպանվածի հայրը դատապարտում է իր իսկ որդու մեղապարտ արարքը և արդարացնում հայ տղաների գործելակերպը (**Երամեան Հ., 1929**), սակայն ֆրանսիական թուրքամոլ հյուպատոս Ս. Զարզեկին պաշտպանում է թուրքերին և հայ տղաների ինքնապաշտպանությունը որակում որպես անպատկառություն ու շովինիզմ՝ թուրքերին սադրելով հայերի դեմ: Հ. Երամյանը խիստ պատասխան է տալիս հայատյաց հյուպատոսին՝ նշելով, որ «դուք, Պ. հիւպատոս, ասպետական ժողովուրդի մը զաւակները կամ քաղաքացիներդ անարդար մեղադրանքներով մեր վէրքերը մի՛ ընդլայնէք» (**Երամեան Հ., 1929**): Հյուպատոսի թուրքասեր գործելակերպի մասին 1914թ. «Ազատամարտ»-ում քննադատական հոդվածաշար է տպագրում նաև Ա. Վռամյանը (**Երամեան Հ., 1929**):

Կուսակալ Իսմայիլ Հազգը կազմակերպում է թուրք աշակերտների թաղումը՝ իբրև «շեհիտների» (նահատակներ - Ա. Հ.), միաժամանակ նա բարյացակամ է վերաբերվում հայերին և իր իմաստուն շրջահայացությամբ Վանը փրկում է

[2] Ավելի հանգամանորեն տե՛ս **http://teis.yesevi.edu.tr/madde-detay/ismail-hakki-pasa.**:

վերահաս վտանգից՝ թույլ չտալով, որ հասարակական կարգը խաթարվի:

Դժբախտաբար, Իսմայիլ Հազգքն շատ կարճատև պաշտոնավարելուց հետո տեղափոխվեց Ադանա, որտեղ ևս շարունակեց իր բարեհաճ վերաբերմունքը հայերի նկատմամբ:

***Իզզեթ բեյի կուսակալության շրջանը***

1911 թ. սեպտեմբերին Վանի վիլայեթի նոր կուսակալ է նշանակվում քրդական ծագում ունեցող Ահմեդ Իզզեթ բեյը (**Henning, Barbara, 2018**), բայց մինչև նրա ժամանումը իբրև ժամանակավոր փոխանորդ՝ նրա փոխարեն պաշտոնավարում է Վանի զինվորական հրամանատար գեներալ Ջաբիր փաշան (**АВПРИ РФ, 1911-1914**):

Իզզեթ բեյը քուրդ Սայիդ փաշայի խորթ եղբայրն էր, Փարիզում հրատարակվող «Մեշրութիեթ» թերթի խմբագիր քուրդ Շերիֆ և նրա եղբայր Ֆուադ փաշաների հորեղբայրը, օսմանյան խորհրդարանի քուրդ պատգամավոր, ազատական հայացքներով հայտնի՝ Աբդուլ Գատերի ազգականը (**«Մշակ», 1912, թիւ 210**) և մինչև Վան մեկնելը պաշտոնավարել էր Բ.Դռան մեջ: Ջաբիր փաշայի վկայությամբ ժամանակին նա եղել էր և դեռ շարունակում էր լինել Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանատան լրտեսը (**АВПРИ РФ, 1911-1914**):

Նրա նահանգապետության ղեկավարման շրջանը համընկնում է իթթիհատի կառավարման առաջին, իթթիլաֆի և իթթիհատի կառավարման երկրորդ շրջանների հետ (**https://en.wikipedia.org/wiki/Kurd_Ahmet_Izzet_Pasha**):

Իզզեթ բեյի պաշտոնավարման շրջանի կարևոր և հետաքրքիր իրադարձություններից մեկը 1912թ. փետրվարի 13-ին ՀՅԴ-ի և իթթիհատի միջև ստորագրված դաշնագիրն էր, որով իշխող կուսակցությունը պարտավորվում էր կատարել իր վաղեմի խոստումները հայերի հողային, դպրոցական, ապահովության և այլ խնդիրների լուծման վերաբերյալ (**«Հորիզոն», 1913, թիւ 6**):

1912 թ. ձմռանը և գարնանը Վանում անցկացվեց մարդահամար, ըստ որի՝ Վանի և 33 արվարձանների հայ և թուրք բնակչության թիվը կազմում էր 24000 մարդ, որից 17000-ը՝ քաղաքի մեջ, իսկ 7000-ը՝ արվարձաններում (**«Ազատամարտ», 1912, թիւ 840**):

***Վանի նոր քաղաքապետի ընտրությունները***

Իզզեթի պաշտոնավարման շրջանում 1912 թ. Վանում անցկացվեցին քաղաքապետի ընտրություններ, որին մասնակցելու համար իրենց թեկնածություններն առաջադրեցին քաղաքում մեծ հեղինակություն վայելող հասարակական երկու նշանավոր գործիչներ՝ Ավետիս Թերզիբաշյանը և Պետրոս Գափամաճյանը:

Ավետիս Թերզիբաշյանը, որն ավելի կրթված և հեղինակավոր անձնավորություն էր, ընտրություններում տանում է վստահ և համոզիչ հաղթանակ: Սակայն շուտով նա գործի բերումով մեկնում է Վանից և իր պաշտոնը փոխանցում է Պետրոս Գափամաճյանին, որը ստանում է «բեյության» տիտղոս և կոչվում է «Հաճի բեյ»:

Պետրոս բեյ Գափամաճյանը Վանի հարուստ ու աչքի ընկնող վաճառականներից մեկն էր, որի շնորհիվ Վանում մեծ զարկ էր ստացել առևտուրը և առևտրական ընկերության մասնաճյուղեր էին բացվել գյուղերում ու շրջաններում: Նա եղել էր նաև Վանի նահանգի թաղական խնամակալ, վանքերի և դպրոցների հոգաբարձու, գավառական մեջլիս իդարեի (վարչական ժողով - Ա.Հ.) անդամ: Միաժամանակ, Պ. Գափամաճյանը հիմնադրում է Բարեգործականի Վանի մասնաճյուղը, դառնում նրա ատենապետը, օգնում է նահանգի հայկական դպրոցներին և մեծ դեր խաղում Վանի վարժապետանոցի բացման գործում՝ նվիրելով մեծ գումար, իսկ հետագայում նաև այդ հաստատության համար կատարելով հանգանակություն: Վանում մի քանի հարյուր ընտանիք գոյատևում էր նրա բարեգործության հաշվին[3]:

---

[3] Դաշնակցական մամուլը, որն այլ կարծիք ուներ Պ. Գափամաճյանի մասին, փաստում է, որ նա վերին աստիճանի գոռոզ, ամբարտավան և փառասեր անձնավորություն էր, «հին հայեացքներով ու մտքերով աղա էր նա... չէր ընդուներ, որ իրմէն բացի ուրիշները ազգի տէր ճանչըցին»: Դաշնակցության տվյալներով նա իր մասնակցությունն էր բերել Վազգենին (Տիգրան Տերոյան) և նրա ընկերներին Վանից հեռանացնելու, իսկ հետո նաև՝ հեղափոխական երիտասարդներին ձերբակալելու և աքսորելու գործում: Պ. Գափամաճյանն իր անձնական միջոցներով զինվորական հանդերձանք էր կարել Սասունի 1904 թ. ապստամբությունը ճնշած թուրքական բանակի զինվորների մի մասի համար: 1908թ.Դավոյի դավաճանության ժամանակ նա օգնել էր ոստիկաններին զենքի թաքստոցները բացահայտելու գործում և չէր նպաստել հողային խնդրի լուծմանն ու քրդական հարստահարությունների վերացմանը: Տե՛ս **(«Հորիզոն», 1913, թիւ 47)**:

Պ. Գափամաճյանը ծավալում է քաղաքապետական բավականին հաջող գործունեություն և դառնում է Վանի լավագույն քաղաքապետներից մեկը: Նրա մասին խոսելիս Ա. Եկարյանը խոստովանում էր, որ Վան քաղաքը նրա նման լավ քաղաքապետ քիչ է ունեցել (**Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995**): Իսկ հոդվածագիր Վահան Մինախորյանը (Մտրակ - Ա.Հ. (**Հովակիմյան Բ., 2005**) նրա մասին նշում էր. «Անկեղծ ու անվախ կերպով յայտնում էր իր զգացումը, ճիշտ ու անաչառ էր իր պաշտօնակատարութեան մէջ և այդ պատճառով շատ նախանձորդներ ունէր, որոնց և զոհվում է այժմ: Իբրև անաչառ, շիտակ մի անձնավորուիւն, ճշմարտութիւնը խօսելու չէր քաշվում և ինչպէս կառավարութեան, այնպէս էլ ազգային շրջանակներում համարձակ խօսում էր, մի արժանիք, որ շատերին տրված չէր» (**«Մշակ», 1913, թիւ 11**):

***Օսմանյան խորհրդարանի երրորդ՝ 1912 թ. ընտրությունները***

Իզզեթի կառավարման շրջանում 1912 թ. ապրիլի 6-8-ը Վանում անցկացվեցին նաև Օսմայան խորհրդարանի երկրորդ կարգի ընտրություններ: Հայկական միջավայրում պայքարն ընթանում էր դաշնակցության և հնչակյան-սահմանադիր-ռամկավար դաշինքի միջև[4]: Օսմանյան երկրորդ խորհրդարանի բացումը տեղի ունեցավ 1912 թ. մայիսին (ըստ մեկ այլ տեղեկության՝ ապրիլի 12-ին (**Ճէրէճեան Ե., 2008**)՝ Օսմանյան Թուրքիայի համար արտաքին քաղաքական անբարենպաստ պայմաններում: Ընտրությունների արդյունքում խորհրդարան անցան 275 պատգամավորներ, որոնցից 6-ը ընդդիմադիր էին (**Akmeshe H., 2005**): Վանից պատգամավորներ ընտրվեցին իթթիհատականներից՝ Միդհատ-բեյը[5], իսկ դաշնակցականներից՝ Ա. Վռամյանը (**ՀԱԱ**):

Ընտրություններից հետո դաշնակցությունը հաշվի առնելով, որ իշխանությունները հրաժարվել էին կատարել 1912թ. փետրվարի 13-ի

[4] Այս մասին ավելի հանգամանորեն տե՛ս **Հարությունյան Ա., 2019**:

[5] Հետագայում «Միություն և Առաջադիմություն» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարների ու պաշտոնյաների 1919 թ. մարտի 8-ի դատավարության ժամանակ ռազմական դատարանը քաղաքական հարցերով զբաղվելու համար «Միություն և առաջադիմություն» կուսակցության Բրուսայի պատասխանատու քարտուղար, ծագումով կեսարացի՝ Հաջի Հասան Ահմեդ Միդհատ բեյին զրկեց զինվորական աստիճանից: Տե՛ս **Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, 1988**:

նախընտրական դաշնագրային պարտավորությունները, 1912թ. մայիսի 5-ին պաշտոնապես հարաբերությունները խզում է իշխող կուսակցության՝ իթթիհատի հետ՝ պետության հետ հարաբերվելու պարտականությունը վստահելով Կ.Պոլսի Հայոց պատրիարքությանը: Սակայն դրանից հետո էլ հարաբերություններն ըստ էության շարունակում են պահպանվել: Արամը ՀՅԴ արևմտյան բյուրոյին (Թուրքիայի հատված) ուղղված իր 1912թ. սեպտեմբերի 19-ի նամակում խորհուրդ էր տալիս. «դուք ձեր դիրքը որոշեցէք կառավարութեան հանդէպ, ճիշտ է վերջնագիրը տալը ...» **(Մանուկեան Ա., 2021)**: Այսինքն՝ 1912թ. աշնանն անգամ դեռևս ճշգրտված չէին իթթիհատի հետ դաշնակցության հետագա անելիքները:

***Հայ-քրդական հարաբերությունները***

Իզզեթ բեյը ջանք ու եռանդ չէր խնայում իր իշխանության տակ գտնվող քրդերին սիրաշահելու, ոճրագործներին պատասխանատվությունից զերծ պահելու կամ միայն նվազագույն պատժի ենթարկելու համար: Չթաքցնելով իր կողմնակալ վերաբերմունքը քրդերի հանդեպ՝ նա Վան հասնելուն պես հայտարարում է, որ «չեմ ուզեր որ քիւրտերուն դպչին» **(«Հորիզոն», 1912, թիւ 263)**: Արդյունքում նրա օրոք քրդերն ավելի աշխուժացան, իսկ քուրդ ավատատերերն ավելի խրախուսվեցին: Եվ դա պատահական չէր, քանի որ նոր նահանգապետը նրանց պես բռնապետ էր, նրանց պես ավազակ: Այսպես, նա Արճեշում՝ կառավարչի տան մոտ, որպես համակրանքի արտահայտություն՝ համբուրում է տեղի քուրդ նշանավոր ոճրագործների՝ Հյուսեին և Էմին փաշաների և նրանց համախոհների ճակատները:

Նրա օրոք Վանի բանտից ազատ արձակվեցին քուրդ շեյխ Ջելալեդդինը, Աբաղայի մեջ թալանի համար զինվորական իշխանության կողմից բանտ նետված Հասան և Էոմեր աղաները: Բանտային պատժից ազատվեցին նաև Նեջիբ և Հյուսեին աղաները, որոնք օժանդակել էին քուրդ ավազակապետեր Սեիդին և Միր-Միհեին՝ թուրք սպա Քեազիմին սպանելու գործում **(«Հորիզոն», 1912, թիւ 263)**: Ներում է շնորհվում նաև Միր-Միհեին և Մահմեին: Եվ սա պատահական չէր, քանի որ Վանի նահանգապետ քուրդ Իզզեթ բեյի քաղաքականության անբաժանելի մասն էր կազմում քրդերին սիրաշահելը և նրանց Վանի խաղաղ կյանքին համակերպելը:

Ճիշտ է, անհրաժեշտության դեպքում կառավարությունը ավազակախմբերի հետապնդման համար մեծամեծ ծախսեր էր հատկացնում ոստիկաններ և զինվորներ տրամադրելու համար, սակայն իրականում նրանց ձերբակալելու լուրջ դիտավորություն անգամ չկար, իսկ արձակված հրամաններն էլ առանձին դեպքերում երկդիմի էին: Իրականում ավազակներին հետապնդելու համար ուղարկված ոստիկաններն աչքակապուկ էին խաղում բնակչության հետ: Նրանք անհրաժեշտության դեպքում միտումնավոր և վստահաբար շարժվում էին այն գյուղի ուղղությամբ, որտեղից որ ավազակներն արդեն մեկնել էին և խոշտանգում էին տեղի հայ գյուղացիներին՝ պատճառաբանելով, թե ինչո՛ւ էին նրանք ավազակներին ապաստան տալիս: Ու երբ գյուղացիները մատնանշում էին, որ ավազակները գտնվում էին այս կամ այն վայրում, նրանք մեկնում էին հակառակ ճանապարհով: Պատահում էին նաև դեպքեր, երբ իրար էին հանդիպում կառավարական զորքերն ու քրդական ելուզակները, և զորապետները հրաման չէին տալիս զինվորներին կրակելու քրդերի վրա՝ հնարավորություն ստեղծելով, որ ավազակները հանգիստ հեռանան: Երբ համանման առիթով Հ. եպս. Սարաճյանն իր մտահոգությունն է հայտնում նահանգապետ Իսմայիլ Հազգը փաշային, նա անտարբերությամբ պատասխանում է. «…Ես ի՞նչ անեմ. Սայիդի, Միր-Միհէի և ուրիշ աւազակների վրա ուղարկված զօրագնդերը նրանց հանդիպելիս չեն ուզում խփել աւազակներին, ուստի միտք չունի նրանց վրա զսպիչ զօրագնդեր ուղարկելը, որը կառավարութեան գանձին ի զուր ծախք է պատճառում միայն» **(«Մշակ», 1912, թիւ 174)**: Վալիի նման պատասխանը ոչ միայն հուսահատական էր, այլև անվայել, քանի որ այն ցույց էր տալիս պետական բարձրաստիճան պաշտոնյայի ինչպես անտարբերությունը, այնպես էլ ապաշնորհությունը և թուլությունը:

***Հայ-քրդական հողային վեճերի կարգավորման փորձերը***

1912 թ. դեկտեմբերի սկզբներին ներքին գործերի նախարարությունը Արևմտյան Հայաստանի վեց նահանգների կուսակալներին ուղարկած հայ-քրդական հարաբերությունների կարգավորման մասին հրահանգներից երեքում հատուկ ուշադրություն էր հրավիրում հողային հարցի լուծման խնդիրներին, ըստ որի նախատեսվում էր Վանի կուսակալ Իզզեթ բեյի նախագահությամբ կազմել մի

հանձնաժողով, որում պետք է ընդգրկվեին Վանի մյուֆթին, Վանի հոգևոր առաջնորդ Հ. եպս. Սարաճյանը, քուրդ և հայ երևելիների երկուական ներկայացուցիչներ, այդ թվում՝ Պ. Գափամաճյանը և Գ. Ճիտեճյանը, դատարանի նախագահը և զինվորական սպաները **(«Ազդակ», 1913, թիւ 2)**: Այս մասին Վանի առաջնորդական տեղապահ Սարաճյան արքեպիսկոպոսը Կ. Պոլսի հայոց պատրիարքին ուղղված 1912 թ. դեկտեմբերի 27-ի պաշտոնական գրությամբ տեղեկացնում էր, որ նահանգապետ Իզզեթ փաշայի նախագահությամբ և իր, ինչպես նաև Գևորգ Ճիտեճյանի, Ավետիս Երամյանի, երեք թուրքերի և մեկ զինվորական սպայի մասնակցությամբ կազմվել է հանձնաժողով՝ «քննելու և լուծելու համար ապօրինի կերպով գրաւուած հողերու խնդիրը» **(«Ազատամարտ», 1913, թիվ 112; «Մշակ», 1913, թիւ 14)**:

Հանձնաժողովը կատարելով հողի մասին քննություն՝ պետք է արդար որոշում կայացներ, իսկ հողից զրկված կողմին պետք է տրվեր կա՛մ դրամական հատուցում, կա՛մ որոշակի հողատարածք պետական սեփականությունից: Երկու կողմերն անդորրագրով պետք է հավաստեին իրենց գոհունակությունը որոշումից **(«Առաջամարտ», 1912/1913, թիւ 34)**:

Սկզբից ևեթ ժողովուրդը թերահավատությամբ լցվեց հանձնաժողովի գործունեության նկատմամբ, քանի որ նրանից լուրջ արդյունքներ չէր ակնկալում: Բանն այն էր, որ կառավարությունը չէր կամենում քուրդ ավատապետների նկատմամբ խիստ միջոցներ գործադրել, քանզի այն առիթ կդառնար քրդական խլրտումների համար: Քուրդ ավազակներն ազատորեն զինում էին քրդական գյուղերը, իսկ վալին էլ «ոչ մի բան չէ արել դարման անել» **(«Մշակ», 1913» թիւ 81)**: Այդ պատճառով էլ հանձնաժողովի գործունեությունն էական արդյունք չի տալիս և հողերի բռնազավթումների հարցը շարունակ ձգձգվում է:

***Կոտորածների սպառնալիքը***

Վանի հայերի նկատմամբ գործադրված բռնությունների, սպանությունների և անապահովության մղձավանջը շարունակվեց և նոր դրսևորումներ ձեռք բերեց նաև այն բանից հետո, երբ իշխանությունը 1913 թ. հունվարի 10-ին իթթիլաֆիստներից՝ «Հյուրրիեթ վե իթթիլաֆ»՝ «Ազատություն և համաձայնություն»

կուսակցությունից, կրկին անցավ իթթիհատականների ձեռքը: Հայկական հարցի վերաբացումը, իթթիհատականների կրկին իշխանության ղեկին անցնելն առաջ բերեցին ատելության մի նոր ալիք հայերի նկատմամբ:

1912-1914թթ. Հայկական հարցի վերաբացումն իր անմիջական բացասական անդրադարձն ունեցավ Վանի նահանգի ազգամիջյան հարաբերությունների վրա: Լոնդոնի «The Times» թերթը 1913 թ. փետրվարի 6-ի համարում նշում էր, որ Վանից ու Սղերդից ստացված հեռագրերի համաձայն հայերի ու մահմեդականների հարաբերություններն օրեցօր սրվում են **(«The Times», 1913)**: «Մշակ»-ի Վանի թղթակիցը շտապում էր տեղեկացնել, որ «հայկական հարցի յարուցմանը շատ վատ աչքով են նայում թիւրքերը ու մեզ հայերիս համարում են խայիններ (անհավատարիմներ – Ա. Հ.), որ թիւրք կառավարութեան մի ծանր մօմենտից օգտվել ենք ուզում, յարուցելով հայկական հարցը, երբ ժամանակը գայ, նրանք անշուշտ չեն մոռանա հայերի այս յանդգնութիւնը և կը պատժեն այն կերպով, ինչպէս պատժում էր Համիդը» **(«Մշակ», 1913, թիւ 38)**:

Իսկ Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Հանս Ֆրայհեր ֆոն Վանգենհայմը (1912-1915 թթ.)՝ հիմք ընդունելով բարձրաստիճան մի քուրդ պաշտոնյայի նամակը, ռեյխկանցլեր ֆոն Բետման-Հոլվեգին ուղղված 1913թ. մարտի 13-ի իր հեռագրում հայտնում էր, որ հայկական հարցի շուրջ պայմանագրի ստորագրումից հետո Վանի նահանգում, որտեղ նահանգապետը քուրդ Իզզեթ բեյն էր, հավանաբար պետք է սպասել հայերի կոտորած **(Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), 1995):**

Կոտորածների սպառնալիքի մասին են վկայում նաև ժամանակի պարբերականներում պահպանված այն տեղեկությունները, որ միայն վեց ամսվա ընթացքում (1913թ. հունվար-հունիս) Վանի նահանգում սպանվեց 106, վերավորվեց 88 մարդ, առևանգվեց 59 կին, իրականացվեց 484 զինված հարձակում հայկական գյուղերի վրա և հափշտակվեցին բազմաթիվ անասուններ **(«Մշակ», 1913, թիւ 193)**:

Ելնելով նահանգում ստեղծված իրավիճակից՝ Վասպուրականի դաշնակցության մարմինը ՀՅԴ-ի, հնչակյանների և ռամկավարների անունից

հանդես է գալիս մի շրջաբերականով, որի մեջ մասնավորապես նշվում էր. «Մեր հայրենիքին այս պատուհասած պատմական մեծ տագնապին հրամայական պարտականություն կդնե գործող կուսակցությունների վրա, մնալով հանդերձ յուրաքանչյուրը իր ծրագրի ու տեսակետի սահմանների մեջ, համաձայնության գալ համազգային բնույթ ունեցող խնդիրների շուրջ» **(ՀԱԱ)**:

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Իթթիլաֆի իշխանազրկումից հետո նահանգային իշխանությունն ամրապնդելու և իր հեղինակությունը պահպանելու համար Իզզեթ բեյը կեղծ տեղեկատվությամբ Վանի օտարերկրյա հյուպատոսներին հայտնում է, որ իբր Կ.Պոլսից Մահմուդ Շևքեթ փաշան հեռագրով դիմել էր իրեն և գոհունակություն հայտնել իր կառավարման որակի և «վարչական կարողութեան համար» **(«Հորիզոն», 1913, թիւ 54)**: Միաժամանակ, նա հանուն իր պաշտոնի պահպանման դիմում է իշխանության ղեկը կրկին ստանձնած իթթիհատականներին՝ նրանց նորից միանալու և հայրենիքի բարօրության համար միասնաբար գործելու ակնկալիքով: Սակայն նրա առաջարկը մերժվում է, և նա 1913թ. ապրիլին՝ որպես իթթիլաֆականների ներկայացուցիչ, պաշտոնանկ է արվում: Մեկնումից առաջ Իզզեթը դիմում է Վանի դաշնակցության անդամներին՝ առաջարկելով «հաշտութիւն եւ հայ եւ քիւրտ համերաշխութիւն», սակայն Ա. Վռամյանը հիշում է, որ «վռնտեցինք, յայտնելով, որ իր գործակցութեան չենք կարօտիր» **(Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, 2015)**:

Նրա փոխարեն Վանի նոր վալի նշանակվեց Հ. Թահսին բեյը **(«Մշակ», 1913, թիւ 98; Erdeha, Kâmil, Milli 1975; Koyunoğlu, Arif Hikmet, 2008)**:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**


1. **ՀԱԱ**, ֆ.1456, ց.1, գ.1, թ.1:
2. **АВПРИ РФ**, ф. 151, Политархив, 1911-1914гг., оп. 482, д. 719, л.10, 22, 67, 232, 266.
3. **Մանուկեան Ա. (2021)**, Նամականի, Երևան, ԵՊՀ հրատ.:

4. **Երամեան Հ. (1929)**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ, Ալեքսանդրիա, տպագր. Արամ Գասապեան:
5. **Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի (1988)**, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
6. **Հարությունյան Ա. (2019),** Նախընտրական պայքարը և հետընտրական զարգացումները Վանի նահանգում և Օսմանյան խորհրդարանի 1912թ. ընտրությունները, «Պատմա-բանասիրական հանդես», թիվ 3, էջ 132-145:
7. **Հովակիմյան Բ. (2005),** Հայոց ծածկանունների բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
8. **Ճէրէճեան Ե. (2007)**, 1912-ի օսմանեան երեսփոխանական ընտրութիւնները եւ արեւմտահայութիւնը, առանձնատիպ Հայկազեան հայագիտական հանդեսի ԻԷ հատորէն, Պէյրութ, առանձնատիպ՝ Հայկազեան հայագիտական հանդէսի, ԻԷ հատ., էջ 51-61:
9. **Յուշեր Արմենակ Եկարեանի (1947),** Գահիրե, տպ. «Նոր աստղ»:
10. **Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար (2015),** ԺԱ հատոր, Պէյրութ-Յունուար, տպ. Համազգայինի Վահէ Սէթեան:
11. **Ռիֆաթ Մ. (1990),** Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը եւ իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Երևան, ԿՓՀ:
12. **Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919) (1995).** Материалы политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник, Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний доктор исторических наук, профессор Вардгес Микаелян, Ереван, Гитутюн.
13. **Челахсаты К. (2009),** Осетия и осетины, Владикавказ, СПб., Печатный двор.
14. **Шлыков П. (2015),** Бекир Сами-бей (Кундух), в сборнике Российская историческая энциклопедия, том 2, Москва, издания ОЛМА Медиа Групп Москва.

15. **Akmeshe H. (2005),** The Birth of Modern Turkey, London/New York, I.B.Tauris.
16. **Erdeha, Kâmil (1975),** Milli Mücadelede vilâyetler ve valiler, Remzi Kitabevi, İstanbul, Basıldığı Matbaa.
17. **Henning, Barbara (2018),** Narratives of the History of the Ottoman-Kurdish Bedirhani Family in Imperial and Post-Imperial Contexts: Continuities and Changes. University of Bamberg Press.
18. **Koyunoğlu, Arif Hikmet (2008),** Osmanlı'dan Cumhuriyet'e bir mimar: Arif Hikmet Koyunoğlu: anılar, yazılar, mektuplar, belgeler, İstanbul, Yapı Kredi Yayınları.
19. **Bernard L. (1968),** The Emergence of Modern Turkey, London, Oxford University Press.
20. «Ազատամարտ» (1913), Կ.Պոլիս, հունվարի 16, թիվ 112:
21. «Ազատամարտ» (1912), Կ.Պոլիս, մարտի 7, թիւ 840:
22. «Ազդակ» (1913), Կ.Պոլիս, հունվարի 12/25, թիւ 2:
23. «Առաջամարտ», 1912 դեկտեմբերի 21 / 1913 հունվարի 3, Կ.Պոլիս, թիւ 34:
24. «Հորիզոն» (1913), Թիֆլիս, հունվարի 10, թիւ 6:
25. «Հորիզոն» (1912), Թիֆլիս, նոյեմբերի 28, թիւ 263:
26. «Հորիզոն» (1913), Թիֆլիս, մարտի 2, թիւ 47:
27. «Մշակ» (1909), Թիֆլիս, նոյեմբերի 12:
28. «Մշակ» (1911), Թիֆլիս, ապրիլի 7, թիւ 73:
29. «Մշակ» (1912), Թիֆլիս, օգոստոսի 9, թիւ 174:
30. «Մշակ» (1913), Թիֆլիս, հունվարի 17, թիւ 11:
31. «Մշակ» (1913), Թիֆլիս, հունվարի 20, թիւ 14:
32. «Մշակ» (1913), Թիֆլիս, ապրիլի 18, թիւ 81:
33. «Մշակ» (1913), Թիֆլիս, սեպտեմբերի 3, թիւ 193:
34. «Մշակ» (1913), Թիֆլիս, սեպտեմբերի 23, թիւ 193:
35. «The Times» (1913), London, Thursday, February 6.

36. https://buildwiki.ru/wiki/Bekir_Sami_Kunduh,https://ru.wikipedia.org/wiki/%D0%9A%D1%83%D0%BD%D0%B4%D1%83%D1%85,_%D0%91%D0%B5%D0%BA%D0%B8%D1%80_%D0%A1%D0%B0%D0%BC%D0%B8
37. http://teis.yesevi.edu.tr/madde-detay/ismail-hakki-pasa.
38. https://en.wikipedia.org/wiki/Kurd_Ahmet_Izzet_Pasha.
39. https://www.turkcebilgi.com/bekir_sami_kunduh.

## REFERENCES

1. **HAA**, f.1456, c.1, g.1, t'.1
2. **AVPRI RF**, f. 151, Politarchiv, 1911-1914, op.482, no. 719, p. 10, 22, 67, 232, 266.
3. **Manukian A. (2021)**, Namakani /Letterman/, Yerevan, ESU ed.
4. **Yeremyan H. (1929)**, Yowshard'an Van-Vaspowrakani /Monument of Van-Vaspurakani/, v. B, Alexandria, Aram Gasparyan ed.
5. **The Genocide of the Armenians according to the documents of the Young Turks trial (1988)**, foreword, translation and notes by A. H. Papazyan, Yerevan, NAS ed.
6. **Harutyunyan A. (2019)**, Naxy'ntrakan payqary' & hety'ntrakan zargacowmnery' Vani nahangowm & O'smanyan xorhrdarani 1912t'. y'ntrowt'yownnery' /The pre-election struggle and post-election developments in Van province and the Ottoman Parliament elections in 1912/, "Historical and Philosophical Journal", No. 3, pp. 132-145.
7. **Hovakimyan B. (2005)**, Hayoc c'ac'kanownneri bar'aran /Dictionary of Armenian code names/, Yerevan, ESU ed.
8. **Jerejyan E. (2007)**, 1912-i o'smanean eresp'oxanakan y'ntrowt'iwnnery' ew arewmtahayowt'iwny' /The Ottoman election of 1912 and the Western Armenians/, special edition from volume ԻԷ of Haykazian Armenological Journal, pp. 51-61.

9. **Yowsher Armenak Ekareani /Memoirs of Armenak Yekarian/ (1947)**, Cairo, Nor Astgh ed.
10. **Niwt'er H.Y.Dashnakcowt'ean patmowt'ean hamar /Materials for the party of Dashnaktutun/ (2015)**, volume 11, Beirut-January, Hamazgajin ed.
11. **Rifat M. (1990)**, O'smanean yeghap'oxowt'ean mowt' c'alqery' ew it't'ihati hayajinj c'ragirnery' /The Dark Sides of the Ottoman Revolution and the Armenian-killing Plans of Ittihat/, Yerevan, KPH ed.
12. **Armyanskiy vopros i genotsid armyan v Turtsii (1913-1919) / The Armenian Question and the Armenian Genocide in Turkey (1913-1919)**/, (1995), Materials from the political archive of the Ministry of Foreign Affairs of Kaiser Germany. Collection, Compiler, executive editor, author of the preface, introduction and notes, Doctor of Historical Sciences, Professor Vardges Mikaelyan, Yerevan, Gitutyun.
13. **Chelahsati K. (2009)**, Osetiya i osetiny /Ossetia and Ossetians/, Vladikavkaz, St. Petersburg, Printing Yard.
14. **Shlykov P. (2015)**, Bekir Sami-bey (Kundukh) /Bekir Sami-bey (Kundukh)/, in the collection Russian Historical Encyclopedia, volume 2, Moscow, published by OLMA Media Group Moscow.
15. **Akmeshe H. (2005)**. The Birth of Modern Turkey, London/New York, I.B.Tauris.
16. **Erdeha, Kamil (1975)**, Provinces and governors in the War of Independence, Remzi Bookstore, Istanbul, Printing House.
17. **Henning, Barbara (2018)**, Narratives of the History of the Ottoman-Kurdish Bedirhani Family in Imperial and Post-Imperial Contexts: Continuities and Changes. University of Bamberg Press.
18. **Koyunoğlu, Arif Hikmet (2008),** An architect from the Ottoman Empire to the Republic: Arif Hikmet Koyunoğlu: memories, writings, letters, documents, Istanbul, Yapı Kredi Publications..

19. **Bernard L. (1968)**, The Emergence of Modern Turkey, London, Oxford University Press.
20. “Azatamart” (1913), K.Polis, hownvari 16, t'iv 112.
21. “Azatamart” (1912), K.Polis, marti 7, t'iw 840.
22. “Azdak” (1913), K.Polis, hownvari 12/25, t'iw 2.
23. “Ar'ajamart”, 1912 dektemberi 21 / 1913 hownvari 3, K.Polis, t'iw 34.
24. “Horizon” (1913), T'iflis, hownvari 10, t'iw 6.
25. “Horizon” (1912), T'iflis, noyemberi 28, t'iw 263.
26. “Horizon” (1913), T'iflis, marti 2, t'iw 47.
27. “Mshak” (1909), T'iflis, noyemberi 12.
28. “Mshak” (1911), T'iflis, aprili 7, t'iw 73:
29. “Mshak” (1912), T'iflis, o'gostosi 9, t'iw 174:
30. “Mshak” (1913), T'iflis, hownvari 17, t'iw 11:
31. “Mshak” (1913), T'iflis, hownvari 20, t'iw 14:
32. “Mshak” (1913), T'iflis, aprili 18, t'iw 81:
33. “Mshak” (1913), T'iflis, septemberi 3, t'iw 193:
34. “Mshak” (1913), T'iflis, septemberi 23, t'iw 193:
35. «The Times» (1913), London, Thursday, February 6.
36. https://buildwiki.ru/wiki/Bekir_Sami_Kunduh,https://ru.wikipedia.org/wiki/%D0%9A%D1%83%D0%BD%D0%B4%D1%83%D1%85,_%D0%91%D0%B5%D0%BA%D0%B8%D1%80_%D0%A1%D0%B0%D0%BC%D0%B8
37. http://teis.yesevi.edu.tr/madde-detay/ismail-hakki-pasa.
38. https://en.wikipedia.org/wiki/Kurd_Ahmet_Izzet_Pasha.
39. https://www.turkcebilgi.com/bekir_sami_kunduh.

**Аветис Арутюнян, Аршак Балян**

**Ванская провинция в годы правления исмаила хагга и иззет-бея (1911-1913). Заключение**

***Ключевые слова и выражения:*** *Исмаил Хагг, Иззет, армяно-курдские отношения, Ванская перепись, Петрос Гапамачян, альянс Дашнакцутюн-Иттихат, земельные споры, Иттихат, Иттилаф.*

В статье представлено положение армян в провинции Ван во время правления губернаторов Исмаила Хагга и Иззет-бея в 1911-1913 гг. После увольнения предыдущего губернатора Бекира Сами-бея, с осени в 1910 года, по в начале 1911 г. должность заместителя губернатора Вана была временно поручена бывшему «девтертару» губернии, которому в начале 1911 г. заменяет Исмаил Хагг. Однако вскоре новым губернатором провинции Ван назначается Иззет-бей, курдского происхождения. В исследовании, с помощью соответствующих фактов, впервые раскрыто положение армян Вана в период правления наместников Исмаила Хагга и Иззет-бея, были выделены армяно-курдские отношения Ванской провинции изучаемого периода, представленны пакт подписанный 13 февраля в 1912 году между дашнакцутюн и «Иттихат», по которому правящая партия была обязана выполнить свои давние обещания относительно решения земельных, школьных, безопасности и других проблем армян. В статье также освещалась выборы второй сессии османского парламента из Жана и перепись насиления В Ване 1912 г.

**Avetis Harutyunyan, Arshak Balyan**

**Van province during the reign of Ismail Hagg and Izzet Bey (1911-1913)**

**Conclusion**

***Key words and expressions:*** *Ismail Hagg, Izzet, Armenian-Kurdish relations, Van census, Petros Gapamachyan, Dashnaktsutyun-Ittihat alliance, land disputes, Ittihat, Ittilaf.*

The article presents the state of the Armenians of Van province during the tenure of governors Ismail Hagg and Izzet Bey, 1911-1913. After the dismissal of their previous governor, Bekir Sami Bey, from the fall of 1910 to the beginning of 1911, the post of deputy governor of Van was temporarily entrusted to the former "deutertar" (tomarakal - A.) of the province, who was replaced by Ismail Hagg Pasha at the beginning of 1911.

However, soon Izzet Bey, who is of Kurdish origin, is appointed the new governor of Van province. In the study, with the help of relevant facts from the source, for the first time, the situation of Armenians in Van province during the rule of Ismail Hagg and Izzet governors was covered, the Armenian-Kurdish relations of Van province during the study period were highlighted, it was presented on February 13, 1912 between ARF and Ittihat the signed pact by which the ruling party was obliged to fulfill its long-standing promises regarding the solution of Armenians' land, school, security and other problems. The article also revealed the elections of the second class of the Ottoman Parliament held in Van on April 6-8, 1912 and the mayoral elections held in Van in 1912.

***Ավետիս Հարությունյան*** *- Պատմական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է՝ Հայաստանի պատմական աշխարհագրություն, Առաջին աշխարհամարտի տարիներին հայ գաղթականության պատմություն, Վասպուրականի պատմություն, Հայ եկեղեցու պատմություն: Ունի հրատարակված շուրջ 180 գիտական աշխատություններ, որոնք վերաբերում են Հայաստանի պատմության տարբեր խնդիրներին:* avharutunyan@mail.ru,

***Արշակ Բալյան*** *- Պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Աստվածաբանության և հայոց եկեղեցու պատմության ամբիոնի դոցենտ:* bal.ars hak@mail.ru,

***Аветис Арутюнян*** *- Кандидат исторических наук, профессор кафедры Истории Армении АГПУ им. Х. Абовяна.Сфера научных интересов охватывает темы: историческая география Армении, армянские беженцы в годы Первой мировой войны, история Васпуракана, история Армянской церкови. Имеет около 180 научных трудов, посвященных разным вопросам истории Армении.* avharutunyan@mail.ru

***Аршак Балян*** *- Кандидат исторических наук, доцент кафедры теологии и истории Армянской церкви ЕГУ.* bal.ars hak@mail.ru

***Avetis Harutunyan*** *- Candidate of historic scienceis, professor at the Chair of the History of Armenia at the State Pedagogical University after Kh. Abovyan. The sphere of scientific interests includes such subjects as: The Historical Geography of Armenia, Armenian Refugees During the First World War, The History of Vaspurakan, The History of Armenian Church. Has written over 180 scientific works dedicated to various subjects on the History of Armenia. avharutunyan@mail.ru*

***Arshak Balyan*** *- Candidate of historical sciences, docent of the Department of Theology and History of the Armenian Church of YSU. bal.ars hak@mail.ru*

*Խմբագրություն է ուղարկվել 15.01.2024թ.*
*Հանձնարարվել է գրախոսության 20.01.2024թ.*
*Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ.*